

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ԺԱՄԵՐԳԵՐԸ ԵՒ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԸ

ՀԵՆՐԻԿ ԲԱՆԶԻՆԵԱՆ

helinemuradyan@rambler.ru

Միջնադարեան հայ գրաւոր-անհատական բանաստեղծութիւնը սկըզբնաւորուել է իբրեւ հոգեւոր երգ, եկեղեցական պաշտօնեղծութիւն՝ գրական եւ երաժշտական բաղադրիչներով: Հոգեւոր երգի գրական բաղադրիչն առաջացել է իբրեւ հայկական սաղմոսարանում ընդգրկուած սաղմոսների եւ օրինութիւնների կցորդում-յաւելումներ: Ուստի եւ հնագոյն հոգեւոր երգերը կոչուել են կցուրդներ: Դրանց մի մասը, որ ընդգրկուել է նախնական *Կցուրդարան-Շարակնոցի* մէջ, օրհներգ-շարականներն են, միա մասը, որ զետեղուել են *Ժամագիրք-Աղօթամատոյցում*, ժամերգերն են¹:

Եթէ կցուրդ-օրհներգերը Ոսկեդարում արդէն լիովին անկախացել են աստուածաշնչեան օրհնութիւններից ու սաղմոսներից եւ բոլոր զարգացում ապրել, ապա ժամերգերը վաղ միջնադարում մնացել են հոգեւոր երգի կայացման նախնական՝ կցուրդ-սաղմոսային փուլում²: Նրանք յաճախ բառացիօրէն կրկնում են սաղմոսների այս կամ այն տողերը, պատկերներն ու արտայայտութիւնները կամ կատարում դրանց յարասութիւնները: Ըստ այդմ, **վաղմիջնադարեան կցուրդ ժամերգերը կիսանկախ, սեղմ քաղագրական երգեր են**: Միայն ԺԲ. դարում, շնորհիւ Ներսէս Շնորհալու, ժամերգը դարձաւ ինքնուրոյն եւ բարձրարժէք երաժշտաբանաստեղծական ստեղծագործութիւն:

Ժամագրքի խորագրի համաձայն, այդ ծիսամատեանը «արարեալ սուրբ եւ աստուածաշնորհ թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ եւ երանելի Հայրապետացն մերոց Գիւրոյ եւ Յովհաննու Մանդակունոյ եւ սրբոյն Ներսէսի Շնորհալոյն»: Սա նշանակում է, որ *Ժամագիրքը* հիմնադրել են Մաշտոցն ու Սահակ Պարթեւը՝ թարգմանելով կամ ստեղծելով նրա հիմքը կազմող նիւթերը՝ իրենց կարգաւորած ծայնեղանակներով երգելու համար: Այնուհետեւ խմբագրել եւ համալրել են Ե. դարում Գիւտ Արահեզացին եւ Յովհան Մանդակունին, ապա անելի ուշ՝ Շնորհալին:

Եթէ մատենագրական բազում տուեալների հիման վրայ որոշակի է, թէ *Կցուրդարան-Շարակնոցի* ո՛ր կանոնների (կարգերի) հիմնական հեղինակներն են Մաշտոցը եւ Ս. Պարթեւը, ապա ժամերգերի վերաբերեալ որոշակի տուեալներ չկան: Այնուամենայնիւ, Ս. Պարթեւի հեղինակած ժամերգերի պարագայում որոշ ճշտումներ հնարաւոր է կատարել:

Սահակ Ամատունու վկայակոչած ձեռագիր աղբիւրներից մէկի համաձայն, «*Եւ զառաւաւր երգն եւ զՀանգստեանն սուրբն Սահակ Պարթեւն է ոգեալ*»³: Ըստ Նիկողոս Թահմիզեանի, առաւօտերգեր ասելով՝ պէտք է հասկանալ «*մանկունք*» («*մանկպիք*») *անուանոտդ, առաւօտեան ժամին երգելի շարականները*⁴: Սա ճիշտ է, բայց ոչ այս պարագայում: *Շարակ-*

նոցի առանձին Մանկունք-առաւօտերգերի հիմնական հեղինակներն են Պետրոս Գետադարձը եւ Ն. Շնորհալին: Մինչդեռ Ս. Պարթեւը նմանօրինակ ոչ մի օրհներգ չի յօրինել: Վերոբերեալ վկայութեան մէջ յիշատակուած առաւօտերգերը, մեր համոզմամբ, *Ժամագրքի* առաւօտեան ժամերգութեան բաժնում ընդգրկուած երգերն են (չհաշուած Ն. Շնորհալու ներմուծած ծաալուն անուանական ժամերգերը): Այդ նախնական երգերի փոքր ծաալը եւ լեզուաոճական կերտուածքը յուշում են, որ դրանք հնագոյն կցուրդ-ժամերգեր են: Դրանց մեծ մասի հեղինակն, ահա, ըստ մեզ, Ս. Պարթեւն է:

Առաւօտեան ժամերգութիւնը կատարում է ի դէմս Որդի Աստծոյ եւ խորհրդանշում է Քրիստոսի երեսումը իւղաբեր կանանց եւ հռչակում Աստուածորդու յարութեան անտիսն ու փրկագործութեան խորհուրդը: Ժամերգութեան այս բաժնում Ս. Պարթեւն իր իսկ թարգմանած Աւետարաններից բերել է Քրիստոսի յարութիւնն առաջինն անտած իւղաբեր կանանց վերաբերող հատուածները, որոնց սկզբում գետեղել է երկու դրուագով մի երգ՝ «Երգ իւղաբերից անտարանին»: Այդ դրուագները Տիրոջն ուղղուած օրհնութիւն եւ աղերս են՝ կազմուած սաղմոսների որոշ տողերից: Այսպէս, առաջին դրուագը հիաուած է ՃԺԲ սաղմոսի («Օրհնեցէ՛ք, մանկո՛ւնք, զՏէր») առաջին երեք տողերի վերադասաւորմամբ: Վերջին տան մէջ փառաբանում է Սուրբ Երրորդութիւնը, եւ որպէս կրկնակ գործածուած է «ի յայսմհետէ մինչեւ ի յաւիտեան» սաղմոսային կիսատողը: Ուշագրաւ է, որ հեղինակն այստեղ, ինչպէս եւ որոշ այլ դէպքերում, ձգտել է հինկտակարանային բնագրերի (սաղմոսների) միջոցով օրհնաբանել նորկտակարանային երետյթը: Ահա եւ երկրորդ դրուագը.

*Արի՛, Տէ՛ր, օգնեա՛ մեզ
եւ փըրկեա՛ զմեզ վասն անուան Քո:
Արի՛ եւ մի՛ մերժեր զմեզ ի սպառ՝
վասն անուան Քո:*

*Թագաւորեցէ Տէր յաւիտեան,
Աստուած քո, Սիո՛ն, յազգէ յազգ:*

*Օրհնեա՛, ա՛նձն իմ, զՏէր,
օրհնեցից զՏէր ի կենդանութեան իմոյ՛:*

Իւղաբեր կանանց վերաբերող անտարանական հատուածներին յաջորդում է հետեւեալ կցուրդ-ժամերգը, որը, թերեա, Քրիստոսի յարութեանը ձօնուած առաջին հայերէն երգն է.

*Փա՛ղք Յարութեան Քո, Տէ՛ր,
ոչ դադարեցայց, Քրիստո՛ս, օրհնել ըզՔեզ
զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:*

*Փա՛ղք Յարութեան Քո, Տէ՛ր,
ոչ դադարեցայց, Յիսո՛ւս, գովել ըզՔեզ*

զամենայն ատուրս կենդանութեան իմոյ:

Եւ ոչ դադարեցայց, Փըրկի՛չ, փառատորել ըզՔեզ
զամենայն ատուրս կենդանութեան իմոյ:

Ի գիշերի համբարծէ՛ք զձեռքս ձեր
ի Սըրբութիւն եւ օրհնեցէ՛ք զՏէր:

Աստ օրհնեցէ՛ք, ամենայն ծառա՛յք Տեառն,
ըզՏէր ի Սըրբութիւն եւ օրհնեցէ՛ք ըզՏէր: (ԺԱԱ, 323)

Սրան հետեւում է եկեղեցական մի շարք տօների նուիրում՝ մի բազմադրուագ երգ, որի բաղադրիչները հիմնականում Աւետարանների համապատասխան հատուածների սեղմ վերարտադրութիւնն են, ինչպէս.

Ծննդեան

Հոյք հոգեղէնք ընդ հովիւսըն քարոզէին
ի յանբանից մըստօր զԲանըն Բազմեալ:

Եւ մոգքն աստեղբուն գուշակեալ՝
մատուցին զընծայսըն խորհրդոյ:

Տեառնընդառաջի

Քառասնօրեայ Տըղայ եւ Տէրն
օրինադիր Տօրինաբար եկն ի Տաճարն:

Եւ Սիմէօն գըգուէր գըրկօքըն
եւ յօրինաց կապից լուծումն հայցէր
ի կեանս անբարանի: (ԺԱԱ, 327-328)

Յատկանշելի է, որ համբարծմանը նուիրում կցուրդ-երգն ընդամենը ներկայացնում է ԻԳ սաղմոսի («Տեառն է երկիր») 7րդ տողը.

Համբարծէ՛ք, իշխա՛նք, զղըրունըս ձեր ի վեր,
եւ գայ՝ մըրանէ փառօք ի փառըս: (ԺԱԱ, 325)

Առաւօտեան ժամերգութիւն ընդգրկում «Փա՛ռք ի բարծունս» համաքրիստոնէական օրինաբանական երգի թարգմանութեանը *Ժամագրքում* յաջորդում է յարութեանը նուիրում մի երգ՝ խորագրում «Առաւօտու երգ յարութեան կարգա»։ Սա, ըստ հայկական ծայնեղանակների, բաժանում է չորս դրուագների, որոնց յաջորդում են համբարծմանն ու հոգեգալստեանը վերաբերող մէկական դրուագ։ Վեց դրուագներից իւրաքանչիւրը բաղկացած է երկու շարահիւսական տողերից, որոնցից առաջինը կըրկնւում է բոլոր դրուագներում։ Այսինքն՝ իւրաքանչիւր դրուագ ունի միայն մէկ չկրկնուող տող։ Եւ այդ սեղմ տողերով փառաբանում է յարութիւն առած Քրիստոսը։ Ահա դրուագներից մէկը.

ՁՅարութիւն զՓըրկչին օրհնեսցուք,
զՓըրկչին մերոյ օրհնեսցուք զՅարութիւն:

Որ համբերեաց խաչի եւ եղաւ ի նորոփոր վիմին
եւ աստուածային Յարութեամբն զմահացեալսն

վերածնաց ի կեանս: (ԺԱՄ, 361)

Յարութեանը նուիրումը երգին անմիջապէս յաջորդում է մի երգաշար՝ խորագրուած «Առաւօտու երգը աղուիացից եւ այլոց աւուրց պահոց»։ Շարքն ընդգրկում է մի շարք փոքրիկ կցուրդ-երգեր, որոնք նախատեսուած են պահոց օրերին երգուելու։ Այդ երգերի մեծագոյն մասը նոյնպէս մի շարք սաղմոսներից կատարուած քաղուածքներ են, որոնք յարմարեցուած են եկեղեցու սահմանած տօներին։ Այսպէս, օրինակ, Ղազարի յարութեանը վերաբերող երգը կազմուած է ԻԹ սաղմոսի («Բարձր առնեմ զՔեզ, Տէ՛ր») առաջին եւ երրորդ տողերի ետեառաջությամբ։

Տէ՛ր, հաներ ի դժոխոց զանձն իմ,

փըրկեցեր զիս ի յայնցանէ, որք իջանեն ի գոյ:

Բարձր առնեմ ըզՔեզ, Տէ՛ր,

զի ընկալար զիս եւ ոչ ոտախ արարեր

ըզթըշնամին իմ ի յիս: (ԺԱՄ, 364)

Շարքի որոշ երգեր ներկայացնում են ամետարանական համապատասխան հատուածի սեղմ բովանդակութիւնը, ինչպէս, օրինակ, Ծաղկազարդին նուիրումը երգում.

Այսօր մըկտանէ Թագատորըն մեր Քրիստոս

ի յերուսաղէմ Նոր՝ քաղաք Դաւթի:

Ընդ առաջ ելին ծերքըն՝ ոսկովք ձիթենեօք

եւ զԱստուածորդին փառատրէին: (ԺԱՄ, 364-365)

Այս երգին համահունչ է Սահակ Պարթեւի՝ Ծաղկազարդին ձօնուած օրհներգերից մէկի հետեւեալ տունը.

Յորժամ եկըն Յիսուս յերուսաղէմ ի քաղաքն,

Ընդ առաջ ելին ծերքըն՝ ոսկովք ձիթենեօք

եւ զԱստուածորդին փառատրէին⁶:

Սա հաստատում է բերումը առաւօտերգի եւ օրհներգի հեղինակի նոյնութիւնը, ինչպէս նաեւ այն, որ **առաւօտերգերի հիմնական հեղինակը Սահակ Պարթեւն է:**

Ժամագրքային որոշ առաւօտերգեր թերեւս հեղինակել է Մաշտոցը եւ, անյի ուշ, Արաիեզացին եւ Յովհան Մանդակունին⁷: Սակայն առայժմ հնարատր չէ ասել, թե՞ յատկապէս ո՞ր երգերն են դրանք:

Յայտնի է, որ Ս. Պարթեւն է հեղինակել *Ժամագրքի* գիշերային ժամերգութեան բաժնում ընդգրկուած չորս երգուող քարոզներն ու յարակից աղօթքները⁸: Անշուշտ, նա պիտի հեղինակած լինէր նաեւ դրանց կից երգերը: Սակայն գիշերային ժամերգութեան բաժնում առկայ են բացառապէս Շնորհալու ներմուծած ժամերգերը: Շատ հնարատր ենք համարում, որ այդ բաժնի ննջեցելոց քարոզից առաջ (ԺԱՄ, 163) Ս. Պարթեւը զետեղել է իր յօրինած հանգստեան (ննջեցելոց) ժամերգերը: Սակայն *Ժամագիրքը* խմբագրելիս, Շնորհալին դրանք փոխարինել է իր հեղինա-

կած երգերով, իսկ Ս. Պարթևի կցուրդ-ժամերգերն ընդգրկել է *Շարակնոցի* ննջեցելոց կանոնում, որտեղ դրանք ներկայացուած են իբրեւ առանձին դրուագներ. մինչդեռ, ըստ իմաստի եւ կառուցուածքի, դրանք հինգ առանձին կցուրդ-երգեր են՝ յօրինուած տարբեր սաղմոսների հիման վրայ⁹: Ըստ ասանդութեան, «Չայսպիսի հրաժարական աղօթս» մահից առաջ կատարել է Ներսէս Մեծ Պարթեւը¹⁰: Ուստիեւ, պատահական չէ, որ ձեռագիր աղբիւրներից մէկը նրան է վերագրել հանգստեան երգերը¹¹: Իրականում, *ժամագրքից* հանուած եւ *Շարակնոցի* ննջեցելոց կանոնում ընդգրկուած այդ կցուրդ-ժամերգերի հեղինակը Ներսէս Պարթևի որդի Ս. Պարթեւն է, որին եւ Ս. Ամատունու վկայակոչած աղբիւրը, առաւօտերգերի հետ մէկտեղ, վերագրել է նաեւ հանգստեան երգերը:

Գիշերային ժամերգութեան մէջ բերուած որոշ սաղմոսների ուղղակի արծագանգն ենք գտնում խնդրոյ առարկայ կցուրդ-երգերում: Որպէս օրինակ, բերենք ՃԺԸ սաղմոսի («Երանեալ են ամբիժք») եւ հինգերորդ կցուրդ երգի համապատասխան տողերը.

Սաղմոս

Մերծեցաւ անծն իմ ի հող.

Տէ՛ր, կեցո՛ղիս ըստ բանի Քում:

Ի ճանապարհս պապուիրանաց Քոց ընթացայ...

Օրէնսգէ՛տ արա զիս, Տէ՛ր,

ի ճանապարհս իրաւանց Քոց

եւ խընդրեցից զՆա յամենայն ժամ:

Երգ

Մերծեցաւ անծն իմ ի հող, յորմէ սրեղծայ...

Տէ՛ր, Յո՛յս իմ, օգնեա՛ ինծ:

Քանզի պապուիրանաւրն մեղայ...

Չճանապարհըս Քո եւ ոչ պահեցի...

Օրէնսգէ՛տ արա զիս, Տէ՛ր, ի ճանապարհի Քում,

բանզի խընդրեցի գալ առ Քեզ...

Այս ամէնը, կարծում ենք, հաստատում է, որ.- ա.¹ *Շարակնոցի* հանգստեան կանոնում **գետեղուած կցուրդ-երգերը ժամանակին եղել են *ժամագրքի* գիշերային ժամերգութեան մէջ** եւ ք.¹ այդ հանգստեան ժամերգերի հեղինակը Սահակ Պարթեւն է:

Երկու կցուրդ երգեր են առկայ նաեւ *Շարակնոցի* Խաչվերացի առաջին օրուայ կանոնի վերջում: Դրանք եւս, մեր կարծիքով, ժամերգեր են, որոնց հեղինակը դարձեալ Ս. Պարթեւն է: Սարգիս Երեցի վկայութեամբ, «*ՉԽաչին կարգն եւ գեկեղեցոյն... սուրբն Սահակ Պարթեւն ասաց*»¹²: Խաչի եւ Եկեղեցու օրհներգերի կարգերի կազմողն ու հիմնական հեղինակը Սահակ Զորոփորեցին է: Մինչդեռ Ս. Պարթեւը Խաչին ու Եկեղեցուն նուիրուած օրհներգեր չի գրել: Սարգիս Երեցին գուցէ շփոթեցրել է Ս. Պարթևի

ու Ձորուփորեցու անունների նոյնությամբ, գուցե եւ նա նկատի է ունեցել այն, որ Ս. Պարթեւը հեղինակել է Խաչին ու Եկեղեցուն նուիրուած ժամերգեր:

Մեր կարծիքով, Խաչվերացի առաջին օրուայ կանոնում ընդգրկուած կցուրդ-երգերը գտնուել են *Ժամագրքի* հանգստեան ժամերգութեան մէջ՝ սուրբ Խաչին նուիրուած քարոզից առաջ եւ Դ. սաղմոսից («Խաղաղութեամբ յայս») յետոյ (*ԺԱՄ*, 873-7): Այս վարկածի օգտին է խօսում այն, որ կցուրդ երգերից մէկն անմիջապէս առնչուած է Դ. սաղմոսին: Անելի որոշակի՝ երգի երկրորդ տունը այդ սաղմոսի 7-8րդ տողերի կրկնութիւնն է: Բերենք այդ երգը.

*Փա՛ղք սուրբ Խաչին, ալէլուիա՛,
սուրբ Սիօնին, ալէլուիա՛,
սուրբ Յարութեանն, ալէլուիա՛:*

*Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց Քոց,
եւ ետուր ուրախութիւն սըրտից մերոց,
ի պըրդոյ ցորենոյ, գինոյ, ծիթոյ իւրեանց
լըցուցեր զնոսա:*

Փա՛ղք սուրբ Խաչին, ալէլուիա՛:

*Փա՛ղք եւ երկըրպագութի՛ւն
Հօր եւ Որդոյ Սըրբոյ Հոգոյն
այժմ եւ յաւիտեանըս յաւիտենից. ա՛մէն:*

Փա՛ղք սուրբ Խաչին, ալէլուիա՞¹³:

Այսպիսով, ուրեմն, մենք հակուած ենք ընդունելու, որ Սահակ Պարթեւն է *Ժամագրքի* Առաւօտեան ժամերգութեան երգերի (առաւօտերգերի) մեծ մասի, ինչպէս նաեւ գիշերային ու հանգստեան ժամերգութեան մէջ նախապէս ընդգրկուած երգերի հեղինակը:

Նշենք նաեւ մի ուշագրաւ փաստ: Որոշ ձեռագրերում առկայ է Ս. Պարթեւի հետեւեալ երգը, որ հրապարակել է Թահմիզեանը.

Պարագրի անպարագրելի Բանն ի մարմնի

մարդ յերկրէ,

երկրորդ Ադամ յերկրի Մարդն յայտնեալ:

Հօր պարկեր եւ Կոսիւ կերպարանեալ կընիք,

սկըզբնաւորպիս պըրտուղ Դաւեան՝ յարմարոյն Յեսսեայ:

Մերեալ յազգէն Յոդայ, Տէր եւ Տըղայ.

տիրելով տան Յակոբայ՝ ժառանգ տուաւ հեթանոսաց՝¹⁴:

Այս երգը յետագայում համալրուել է մի շարք հատուածներով եւ կոչուել տաղ կամ մեղեդի¹⁵: Մինչդեռ, մեր կարծիքով, սա *Ժամագրքից* դուրս մնացած երգ է: Ըստ Թահմիզեանի, Ս. Պարթեւին է պատկանում համա-

լրուած երգի վերը բերուած հատուածը միայն, եւ «*դարեր շարունակ լոկ այդ հայրուածն է երգուել որպէս Սահակ Պարթեւի սրեղծագործութիւն*»¹⁶:

Այսպիսով, ուրեմն, **մեր հնագոյն ժամերգերի զգալի մասի հեղինակը Սահակ Պարթեւն է**: Դարեր անց պիտի հանդէս գար Շնորհալին, որը բարենորոգչական մեծ դեր պիտի կատարէր նաեւ ժամերգութեան ասպարէզում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Ներսէս Շնորհալի, *Ժամերգեր, Գրաբար եւ Աշխարհաբար*, աշխատ.՝ Հենրիկ Բախչինեան, Երեւան, «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո» Հրատ., 2012, էջ 215 եւ յետոյ. նաեւ՝ Հ. Բախչինեան, *Ճարականի Գրապարմական Ուղիւն (5-14-րդ Դարեր)*, Երեւան, «Ամարաս» Հրատ., 2012, էջ 288 եւ յետոյ:
- ² Ժամերգ կարող են համարուել նաեւ ժամագրքային բոլոր երգուող գրուածքները (քարոզ, աղօթք, մաղթանք են.): Սակայն, երաժշտաբանաստեղծական առումով, տիպիկ ժամերգեր են ժամագրքային երգերը (յատկապէս՝ *Ժամագրքի Ն. Շնորհալու խմբագրում-յանելումներից* յետոյ): Ընդունելի չենք համարում Թահմիզեանի այն կարծիքը, թէ ժամագրքային երգը կապուած է բացառապէս Շնորհալու անուանը (Թահմիզեան, *Ներսէս Շնորհալին երգահան եւ երաժիշտ*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1973, էջ 75):
- ³ Սահակ վարդապետ Ամատունի, *Հին եւ Նոր Պարականոն Կամ Անվանք Ճարականներ*, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1911, էջ 176:
- ⁴ Նիկողոս Թահմիզեան, *Գրիգոր Նարեկացին եւ Հայ Երաժշտութիւնը V-XV դդ.*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 233:
- ⁵ *Ժամագիրք Հայաստանեայց Ս. եկեղեցոյ*, Վաղարշապատ, Տպարան Սրբոյ Կաթողիկէ Էջմիածին, 1903, էջ 307:
- ⁶ Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթեւ, *Օրհներգեր, Գրաբար եւ Աշխարհաբար*, աշխատ.՝ Հ. Բախչինեան, Երեւան, «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո» Հրատ., 2010, էջ 246:
- ⁷ Գիւտ Արահեզացին, երգեր է գրել արեւագալի ժամերգութեան համար, որը նախապէս եղել է առաւօտեան ժամերգութեան մի մասը: Իսկ Մանդակունին թերեւ գրել է այն առաւօտեղերը կամ այլ բաժինների ժամերգերը, որոնց թեմաներով հեղինակել է նաեւ օրհներգեր: Բաական մեծ է եղել Մանդակունու դերը *Ժամագրքի* կազմատրման գործում (Հայր Վարդան Հացունի, *Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին*, Վենետիկ-Ս. Ղազար, 1965, էջ 163 եւ յետոյ, 499-500):
- ⁸ Հացունի, էջ 153 եւ յետոյ:
- ⁹ Շնորհալի, *Ժամերգեր*, էջ 190-95, 213-14:
- ¹⁰ Գ. Անտիքեան, *Բացադրութիւն Ճարականաց*, Վենետիկ-Ս. Ղազար, 1814, էջ 653:
- ¹¹ Զակար Անասեան, *Հայկական Մատենագիտութիւն*, Հոր. Ա., Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1959, էջ LXVI:
- ¹² Նոյն:
- ¹³ Շնորհալի, *Ժամերգեր*, էջ 188:
- ¹⁴ Թահմիզեան, *Գրիգոր Նարեկացին*, էջ 139:
- ¹⁵ Համալրուած երգն ունի «Պարթեւ Գիորգ» բանակապը: «Գիորգը», ըստ Թահմիզեանի, «պարզապէս անհասկանալի է, եթէ աղծալուծ եւ կամ

պատահականություն չէ» (Թահմիզեան, *Գրիգոր Նարեկացին*, էջ 139): Կարծում ենք, «Գիրոգը» երգի յաւելող Գէորգ Գանձասացն է (թերեւս Անեցին), որն, իդէպ, հեղինակել է Սահակ Պարթեւին նուիրուած մի գանձ (Հայր Ղետնդ Ալիշան, *Յուշիկը Հայրենեաց*, Ա, Վենետիկ-Ս. Ղազար, 1920, էջ 326. նաեւ՝ Հրաչեայ Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան*, Հրդ. Ա., Երեւան, Պետական Համալսարանի Հրատ., 1942, էջ 464): Սահակ Պարթեւի երգը՝ համալրուելով, որպէս տաղ կամ մեղեդի, ընդգրկուել է որոշ ձեռագիր *Գանձարաններում*:
¹⁶ Թահմիզեան, *Գրիգոր Նարեկացին*, էջ 139:

ARMENIAN ANCIENT BREVIARY CHANTS AND SAHAK PARTEV (Summary)

HENRIK BAKHCHINYAN
 helinemuradyan@rambler.ru

The medieval Armenian personal poem was initiated as a spiritual song. Some of the ancient spiritual songs are hymns (sharakans) dedicated to the holidays of the Armenian Church and to the saints, and in the 5th century they were included in a separate church ritual collection (Sharaknots). Other spiritual songs were intended for everyday liturgy and were included in the Book of Hours. A semi-independent, compact compilation of songs, the Book of Hours was initiated by Sahak Partev and Mesrop Mashtots, after which it was supplemented by the Catholicoi Gut Arahezatsi and Hovhan Mandakuni (5th century) and later on by Nerses Shnorhali (12th century).

Diverse bibliographical data confirm the authorship of Mesrop Mashtots and Sahak Partev of a number of songs in the Sharaknots. However, there is no data on the authors of breviary chants, though a number of these could be identified as authored by Sahak Partev.

According to one source, Sahak Partev created the morning songs. These, we discovered, refer not to hymns that are sung in the morning but to the ancient songs of morning service. In this section of the liturgy Sahak Partev inserted in his own translation from the Gospels some parts of the Resurrection of Christ. He composed some of the psalms and songs dedicated to that day which are at the beginning and end of the translation. . They follow songs dedicated to a number of church holidays, songs which are a short reproduction of the corresponding parts of the Gospels.

The study examines a number of these songs and identifies them as authored by Sahak Partev.